ՅՈՒԲԵԼԵԱՆԱԿԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԵՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՄՈՒՏԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(15 սեպտեմբերի, 2014 թ.)

Սիրելի՛ հոգեւոր հայրեր, դասախոսներ, սաներ եւ ներկաներ,

Ուրախ ենք բոլորս 2014-2015 ուսումնական տարեմուտի առիթով: Այս տարին նաեւ հորելյանական է մեզ համար, առաջիկային տոնախմբելու ենք Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 140-ամյակը: Այս պահին Մեր հոգին բերկրում է այնպես, ինչպես Գեւորգ Դ. երանաշնորհ Հայրապետի, ով մեծ տեսիլքով հաստատեց հոգեւոր այս կրթօջախը: Անցնող 140 տարվա ընթացքում Գեւորգյան ճեմարանը Աստծո օրհնությամբ մեծ ներդրում ունեցավ ազգային մեր կյանքում: Այստեղ դասավանդեցին եւ ճեմարանի հոգեւոր անդաստանը ծաղկեցրին մեծանուն մտավորականներ ու հոգեւորականներ, նրա լուսեղեն հարկի ներքո հասակ առան մեր ժողովրդին փառք ու պատիվ բերած հայագետներ, գիտության ու մշակույթի ականավոր ներկայացուցիչներ, ինչպես նաեւ՝ մեծավաստակ հոգեւոր առաջնորդներ: Աստված աճեցրեց ու կենսատու պահեց հոգեւոր մեր այս տունը, մեր բոլորի միշտ սիրելի, միշտ նվիրական ճեմարանը:

Այսօր աղոթք ենք բարձրացնում եւ աստվածային օրհնություն հայցում լուսահոգի Գեւորգ Դ. երախտարժան Հայրապետի, ինչպես եւ՝ ճեմարանի համար խնամք տարած, այն լուսավոր պահած երախտավորների հիշատակին՝ ձեզ հետ միասին հավատ ու վստահություն ունենալով ճեմարանի ընդմիշտ պայծառության եւ նրա գործունեության առավել ու առավել արդյունավորման հանդեպ:

Ճեմարանի առաքելության շարունակողներն այսօր դուք եք, սիրելի՛ դասախոս մանկավարժներ: Դուք մասնակիցն եք Հայ Եկեղեցու հոգեւոր սպասավորների, վաղվա հոգեւոր առաջնորդների, հայ մտավորականների կերտման գործին՝ ձեր հոգում կրելով վաղվա լուսավոր օրվա տեսիլքը այս հաստատության, ինչպես եւ՝ մեր Եկեղեցու, որ աստվածօրհնյալ ուղիներում պահպանի եւ առաջնորդի մեր ժողովրդին: Մաղթում ենք, որ դուք այս հաստատության դերի ու կաեւորության նույն գիտակցությամբ, նրա առաքելության հանդեպ նույն

հավատով իրականացնեք ձեր աշխատանքները, որպեսզի ձեր նվիրյալ ջանքերը բազում պտուղներ բերեն եկեղեցական եւ ազգային մեր անդաստանում՝ Ավետարանի խոսքի համաձայն մեկի դիմաց երեսուն, մեկի դիմաց վաթսուն եւ մեկի դիմաց հարյուր (Մարկ. Դ. 8):

Ճեմարանի կյանքում եւ առաքելության մեջ մեծապես կարեւորված է նաեւ տեսչության աշխատանքը: Տեսուչ, փոխտեսուչներ, վերակացու-դաստիարակներ, ովքեր մեր սանուց համար ծնողներ են, եղբայրներ, հոգեւոր խորհրդատուներ: Նրանք այն պահից, երբ ծնրադրել են Տիրոջ Սուրբ Սեղանի առջեւ, ուխտել են նմանություն բերել մեր տեր Հիսուս Քրիստոսին, նրա կյանքի օրինակով ապրել ու գործել, եւ այդ օրինակը առավել չափով անհրաժեշտ է այս լուսեղեն հաստատության հարկի ներքո, որտեղ հոգիներ են կրթվում, որտեղ ապագան է կերտվում մեր Եկեղեցու, որտեղ երերուն քայլերով դեպի այս հաստատություն եկած սաները, հասակ առնելով, որոշում պիտի կայացնեն՝ իբրեւ հոգեւոր սպասավորներ ծառայելու մեր Եկեղեցում: Մենք պիտի ցանկանք, որ ճեմարանի տեսչությունը մշտապես այդ հայրախնամ հոգածությունն իրականացնի մեր սանուց կրթական-դաստիարակչական գործում: Բնական է, որ պետք է լինենք խստապահանջ, հարկ եղած դեպքում՝ պատժենք նույնիսկ, սակայն ձեր ամեն ինչը սիրով թող լինի, ինչպես առաքյալն է պատվիրում (Ա. Կորնթ. ԺԶ. 14): Իշխանությունն առանց սիրո բռնություն է: Մենք ցանկանում ենք, որ մեր յուրաքանչյուր սանի սիրտ լցվի այդ սիրով, որով ընդառաջ գնան Եկեղեցու անդաստանում ծառայելու ասպվածապարգեւ շնորհի ընկալմանը:

Սիրելի՛ ճեմարանական սաներ, Մենք վստահ ենք, որ դուք լավագույնս կօգտագործեք Գեւորգյան հոգեւոր ճեմարանում ուսանելու ձեզ ընձեռված հնարավորությունը, որ ամբարեք գիտելիքներ, ամբարեք իմաստություն եւ փորձառություն: Աճեցրեք եւ զորացրեք ձեր մեջ հավատքի ապրումն ու զգացումը, որովհետեւ գիտեք առաքյալի խոսքի ճշմարտությունը՝ առանց հավատքի գործերը մեռած են (Յակ. Բ. 17): Հավատքն է գործերին կենդանություն եւ հավերժություն պարգեւում: Մենք պիտի ուզենք, որ ձեր գործերը լինեն կենդանի գործեր՝ դեպի հավիտենություն միտված, որպեսզի մեր Եկեղեցու ընթացքը եւ մեր ժողովրդի կյանքը միշտ լինեն հավերժության լույսով առաջնորդված:

Սիրելինե՛ր, Մեր գնահատանքը եւ օրհնությունն ենք բերում ձեզ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի բոլոր աշխատակիցներին՝ տեսչական կազմին, մանկավարժներին, վարչա-տնտեսական պաշտոնեությանը եւ սիրասուն սանուց: Աղոթում ենք, որ Տիրոջ հովանին հանապազ պահապան լինի ձեզ եւ համայն մեր ժողովրդին եւ շեն ու պայծառ պահի Մայր Աթոռիս Գեւորգյան հոգեւոր ճեմարանը՝ այսօր եւ միշտ. ամեն: